ՏԵՂԵԿԱՆՔ

2021 թ. դեկտեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դիտարկման արդյունքների վերաբերյալ

2021 թ. դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության 38 համայնքներում տեղի են ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններ, որից՝ 36 համայնքում տեղի են ունեցել համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու, երկուսում՝ մեծամասնական ընտրակարգով համայնքի ավագանու և ղեկավարի ընտրություններ:

«Ականատես» դիտորդական առաքելության կողմից երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն է իրականացվել 29 համայնքներում, որտեղ ընթացել են համամասնական ընտրակարգով համայնքի ավագանու ընտրություններ.

	Մարզ	Համայնք	Ընտրողների թիվը
1.	**Արագածոտն**	Աշտարակ	53,979
2.		Ապարան	17,616
3.		Թալին	19,810
4.	**Արարատ**	Մասիս	62,917
5.		Արտաշատ	77,589
6.		Արարատ	29,517
7.		Վեդի	36,928
8.	**Արմավիր**	Վաղարշապատ	44,653
9.		Մեծամոր	54,607
10.		Արմավիր	45,295
11.	**Գեղարքունիք**	Գավառ	44,216
12.		Սևան	30,833
13.		Մարտունի	60,482
14.		Վարդենիս	28,557
15.	**Լոռի**	Սպիտակ	30,689
16.		Վանաձոր	93,836
17.		Փամբակ	9,571
18.	**Կոտայք**	Ծաղկաձոր	5,206
19.		Հրազդան	46,441
20.		Նաիրի	27,899
21.		Նոր Հաճն	22,024
22.		Աբովյան	60,559
23.	**Շիրակ**	Ամասիա	5,696
24.		Աշոցք	7,528
25.		Ախուրյան	31,807

26.		Արթիկ	36,894
27.	**Վայոց ձոր**	Եղեգնաձոր	14,795
28.		Ջերմուկ	6,204
29.		Վայք	9,837

Նախընտրական ժամանակահատվածի գործընթացները դիտարկելու նպատակով «Ականատես»-ը ներգրավել է 17 երկարաժամկետ դիտորդ, որոնք ուսումնասիրել են ընտրությունների վարչարարությունը, գործողությունների համապատասխանությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կողմից սահմանված ժամանակացույցին, քաղաքական ուժերի և նրանց շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի չարաշահումը և ընդհանուր մթնոլորտը: Դիտորդները տեղերում աշխատել են ընտրական հանձնաժողովների, թեկնածուների հետ: Տվյալների հավաքագրումը կատարվել է գրասենյակային հետազոտության, առցանց բաց տվյալների վերլուծության, անմիջական դիտարկումների, պաշտոնական հարցումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև՝ մամուլի լուսաբանումներին հետևելու միջոցով: Անուղղակիորեն ստացված տեղեկությունների ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով՝ դրանք հնարավորինս ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Քվեարկության օրն «Ականատես»-ն իրականացրել է շրջիկ դիտորդություն վերոնշյալ 29 համայնքի 565 տեղամասերում՝ 53 շրջիկ խմբերով:

Դիտարկման արդյունքներ

«Ականատես» դիտորդական առաքելության կողմից նախընտրական ժամանակահատվածում և քվեարկության օրն իրականացված դիտարկման արդյունքները ներկայացվում են ստորև:

Նախընտրական ժամանակահատված

Ընտրական հանձնաժողովների աշխատանք

Տարածքային ընտրական հանձնաժողովները հիմնականում գործել են համաձայն Ընտրական օրենսգրքի պահանջների և ընթացակարգերի:

Դիտարկված 29 համայնքները սպասարկող տարածքային ընտրական հանձնաժողովներում գրանցվել է թվով 48 կուսակցություն և կուսակցությունների դաշինք:

Տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքի դիտարկման գործընթացում դիտորդի իրավունքների խոչընդոտման էական դեպքեր չեն եղել: Միայն Ծաղկաձոր խոշորացված համայնքը սպասարկող թիվ 26 տարածքային ընտրական հանձնաժողովը դիտորդին հրաժարվել է տրամադրել տվյալ համայնքում ընտրություններին մասնակցող «Մեր համայնքը» դաշինքի և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների ներկայացրած գույքի և եկամուտների

հայտարարագրերը՝ նշելով, որ դիտորդն իրավունք չունի իրենցից նման փաստաթղթեր պահանջել[1]:

Դիտարկման ժամանակահատվածում դիտորդների կողմից արձանագրվել է 2 նույնաբովանդակ դիմում-բողոքի ներկայացում թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովին «Լուսավոր Հայաստան» կուսակցության և «Էջմիածին» կուսակցությունների դաշինքի կողմից: Դիմում-բողոքները վերաբերել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից մասնավոր ընկերության միջոցով վերջերս ստեղծված փոքր վահանակների տեղադրմանը Երևան-Էջմիածին ավտոճանապարհին (Զվարթնոց թաղամասից մինչև Էջմիածին քաղաքը): Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից դիմում-բողոքները մերժվել են այն պատճառաբանությամբ, որ տվյալ վահանակները տրամադրվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը, քանի որ վերջինս է միայն դիմել դրանք սպասարկող մասնավոր ընկերությանը:

Կոտայքի մարզի Աբովյան համայնքը սպասարկող թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի տեղեկացմամբ՝ նրանք ստացել են նաև բանավոր դիմում-բողոքներ թեկնածուների կողմից քարոզչական նյութերը օրենքով չսահմանված/արգելված վայրերում փակցնելու մասին: Ի պատասխան՝ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը դիմել է Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետին՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկելու միջոցներ չսահմանված վայրերում փակցված քարոզչանյութերը հեռացնելու նպատակով:

2021 թ. նոյեմբերի 16-ին Ապարան համայնքի Բաղրամյան փողոցում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառները պատռելու կապակցությամբ տվյալ կուսակցությունը դիմում է ներկայացրել ոստիկանություն: Միաժամանակ՝ ոստիկանությանը գրավոր դիմել է նաև թիվ 17 տարածքային ընտրական հանձնաժողովը, ինչի արդյունքում ոստիկանության կողմից սահմանվել է հսկողություն Բաղրամյան փողոցի տարածքում:

Քարոզչանյութերի տարածում

Չսահմանված/արգելված վայրերում քարոզչական նյութերի տարածումը շարունակել է կրել պարբերական բնույթ: Նման խախտումներ թույլ են տրվել ընտրություններին մասնակցող կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների մեծամասնության կողմից: Մասնավորապես՝ պաստառները փակցված են եղել փողոցային սյուների, բազմաբնակարան շենքերի, առևտրի օբյեկտների, տաքսիների վրա: Արձանագրվել է նաև դեպք, երբ պաստառի մակերեսը գերազանցել է 5 քառակուսի մետրը[2]:

ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ ներառեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ[3]: Պահանջվող տվյալները բացակայել են Արարատի մարզի Արտաշատ

---

[1] Ավագանու անդամի թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերը հասանելի չեն առցանց տարբերակով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում ի տարբերություն կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացվող հայտարարագրերի:

[2] Համաձայն ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական պաստառը կարող է փակցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում:

[3] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 21, մաս 10

համայնքում «Քաղաքացիական պայմանագիր», «Օրենք և արդարություն», «Հայրենիք» կուսակցությունների, իսկ Վեդի համայնքում՝ «Իմ հզոր համայնք» կուսակցության քարոզչական պաստառների, Կոտայքի մարզի Աբովյան համայնքում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, իսկ Եղվարդ համայնքում «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության բուկլետների վրա:

Խնդրահարույց է շարունակում մնալ նաև 5 քառակուսի մետր մակերեսից փոքր քարոզչական տպագիր նյութերի հարցը: Ընտրական օրենսգիրքը չի պարունակում հստակ կարգավորումներ նման վահանակների հավասար և թափանցիկ բաշխման վերաբերյալ (ի տարբերություն 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով վահանակների), որով պայմանավորված առաջանում է չարաշահման զգալի ռիսկ: Մասնավորապես՝ գովազդային վահանակների հատկացման համար պատասխանատու համայնքային իշխանությունները, մյուս քաղաքական ուժերի համար գովազդային վահանակների տեղակայման վայրերի և դրանց շուկայական արժեքների վերաբերյալ տեղեկության ոչ լիարժեք հասանելիության պայմաններում, կարող են առավելություն ձեռք բերել գովազդային ծայառություններից օգտվելու հարցում:

Նման իրավիճակ է արձանագրվել ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին, Մեծամոր և Արմավիր համայնքներում, որտեղ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պաստառները քարոզարշավի մեկնարկից մի քանի օր առաջ տեղադրվել են դեպի Երևան տանող մայրուղու վրա, որտեղ նախկինում գովազդային վահանակներ չեն եղել: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նման նորահայտ վահանակների դեպք է արձանագրվել նաև Արարատի մարզի Վեդի համայնքում:

Միջոցառումներ

Թեկնածուների նախընտրական միջոցառումները (հանրահավաքներ, երթերը և բակային հանդիպումներն ընտրողների հետ) ընթացել են հանդարտ, խաղաղ մթնոլորտում: Բռնության, սպառնալիքի, ատելության խոսքի, կաշառքի և բարեգործության դեպքեր չեն արձանագրվել: Ընդհանուր առմամբ առաքելության կողմից դիտարկվել է թվով 82 միջոցառում, որոնց ընթացքում հիմնականում թեկնածուների կողմից ներկայացվել են համայնքում առկա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված՝ քաղաքական ուժերի ծրագրերը:

Վարչական ռեսուրսի չարաշահում

ՏԻՄ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում դիտարկվել են վարչական ռեսուրսի չարաշահման, վարչական լծակների միջոցով ընտրողի ազատ կամքի իրականացումը խոչընդոտելու մի շարք դրսևորումներ՝ հիմնականում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից:

Չարաշահումների տեսանկյունից առավել հաճախ արձանագրվել է հանրային ծառայողների մասնակցություն նախընտրական քարոզչությունը, ներառյալ թե՛ ֆիզիկական ներկայությունը միջոցառումներին, և թե՛ քարոզչություն իրականացնելը, սակայն նաև եղել են այլ դեպքեր: Այսպես՝

- Դեկտեմբերի 3-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքում «Միասնական Արթիկ» կուսակցությունների դաշինքի միջոցառմանը բերվել են Արթիկի մշակույթի տան բարձրախոսները և միկրոֆոնն՝ իր ձողով:
- Նոյեմբերի 20-21-ին Արագածոտնի մարզպետ Ռազմիկ Պետրոսյանը ՀՀ ԱԺ պատգամավոր Մաթևոս Ասատրյանի, մարզպետի տեղակալ Տիգրան Եղիազարյանի,

մարզպետարանի ոլորտային պատասխանատուների հետ այցելել է Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Լուսագյուղ, Եղիպատրուշ, Նիգավան, Կայք, Վարդենիս, Չքնաղ, Թթուջուր, Ձորագլուխ բնակավայրեր: Նրանց ուղեկցել են նաև դեկտեմբերի 5-ին կայանալիք ՏԻՄ ընտրություններում Ապարան համայնքի ղեկավարի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջնորդ, համայնքի ղեկավարի թեկնածու Էդգար Փարվանյանը և բնակավայրերի վարչական ղեկավարները[4]: Չնայած, որ հանդիպումները կազմակերպվել են շաբաթ-կիրակի օրերին, մարզպետի և նրա ենթակայությամբ աշխատող հանրային ծառայողների ակտիվ ներգրավվումը նախընտրական քարոզարշավին՝ իրենց ազդեցության ներքո գտնվող տարածքում ակնհայտ առավելություն է ստեղծում տվյալ քաղաքական ուժի համար, ուստի գնահատում ենք այն խնդրահարույց: Միևնույն ժամանակ արձանագրվել է, որ մարզպետը ՀՀ վարչապետի որոշմամբ 2021 թ. նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 3-ը գտնվել է չվճարվող արձակուրդում[5]:

- Նոյեմբերի 22-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը կազմակերպել է նախընտրական հանդիպում Արարատի մարզի Վեդի համայնքի Վանաշեն բնակավայրի դպրոցի դահլիճում ժամը 15:00-ին:
- Նոյեմբերի 26-ին ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Աբովյան բնակավայրում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական միջոցառմանը աշխատանքային ժամին մասնակցել են դպրոցի ուսուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:
- Նոյեմբերի 27-ին ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրում տեղի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական միջոցառմանը մասնակցել է Արարատի մարզպետ Ռազմիկ Թևոսյանը, որը, ելույթ ունենալով, կոչ է արել ընտրել կուսակցության ընտրական ցուցակով համայնքապետի թեկնածու հանդիսացող Սայեն Հայրապետյանին: Միջոցառմանը մասնակցել են նաև պետական մարմինների ներկայացուցիչներ, ուսուցիչներ: Ինչպես նշվեց մարզպետի ակտիվ ներգրավվումը նախընտրական քարոզարշավին՝ իր ազդեցության ներքո գտնվող տարածքում առավելություն է ստեղծում տվյալ քաղաքական ուժի համար և խնդրահարույց է:
- Նոյեմբերի 28-ին Շիրակի մարզի Ամասիա համայնքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կազմակերպած հանրահավաքի ընթացքում Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը ելույթ ունենալիս, խոսել է ընտրությունների և իրենց ուժի մասին, ներկայացրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակով համայնքապետի թեկնածու Մերգել Ղարիբյանին և նշել. «Ես ուզում եմ, որ դուք վստահ լինեք, որ որպես Շիրակի մարզպետ ես լինելու եմ ձեր կողքին, լինելու եմ պարոն Ղարիբյանի կողքին»: Չնայած, որ հանրահավաքը տեղի է ունեցել կիրակի օրը՝ այնուամենայնիվ մարզպետի կարգավիճակով թեկնածուի օգտին քարոզչությունն անելը ակնհայտորեն վարչական ռեսուրսի չարաշահում է:
- Դեկտեմբերի 3-ին Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Արագած բնակավայրում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հանդիպման ընթացքում, որին ներկա են եղել կուսակցության ցուցակով քաղաքապետի թեկնածու Էդգար Փարվանյանը և արձակուրդում գտնվող մարզպետ Ռազմիկ Պետրոսյանը, Արագածի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրինությունը 5-6-րդ դասաժամերը դպրոցում չեղարկել է՝ հանդիպմանը միանալու նպատակով:

[4] https://www.facebook.com/watch/?v=636303471147020
[5] http://aragatsotn.mtad.am/news/item/2021/11/30/ardzakurd2021/

- Դեկտեմբերի 3-ին, ժամը 17:00-ին Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության եզրափակիչ հանդիպմանը մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման նախարար Գնել Սանոսյանը և Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը[6]:
- Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորել է Վահագն Արսենյանը, որը խոշոր գործարար, «Ջերմուկ գրուպ» ընկերության տնօրեն Աշոտ Արսենյանի որդին է և տվյալ պահին՝ համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Համայնքապետարանի կայքէջում գովազդվել են «Ջերմուկ Գրուպ» ընկերության կողմից նախաձեռնված կապիտալ ներդրումային ծրագրերը՝ հղում կատարելով Վահագն Արսենյանի անձնական էջին[7]:
- Բացի քարոզարշավի իրականացման նպատակով կիրառվող վերոնշյալ դեպքերից՝ վարչական ռեսուրսը հնարավոր է, որ օգտագործված լինի նաև ընտրողի կարծիքը ճնշելու և պատժելու նպատակով: Այսպես՝ ՀՀ Լոռու մարզպետի պաշտոնակատարը 2021 թ. նոյեմբերի 23-ի թիվ 764-Ա որոշմամբ Սյուզաննա Բալայանին ազատել է «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնից, որին վերջինս նշանակվել էր նույն թվականի մայիսի 17-ին[8]: Ըստ Ս. Բալայանի՝ Լոռու մարզպետարանում իրեն աշխատանքից ազատելու մասին որոշումը կայացվել է զուտ քաղաքական դրդապատճառներով: Մարզպետի պաշտոնակատարն ու առողջապահության վարչության պետը նրան կանչել են ու բացատրություն պահանջել, թե ինչու է իրենց ենթական ֆեյսբուքում հավանություն տվել մի գրառման, որն, ըստ նրանց, վարկաբեկում է արձակուրդի մեջ գտնվող Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին, որից հետո, առանց բացատրության, աշխատանքից ազատել են Ս. Բալայանին[9]: Ի դեպ, որոշման մեջ աշխատանքի ազատման հիմքերում հղում է տրվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասին և 88-րդ հոդվածի 5-րդ մասին, որոնք վերաբերում են որոշում ընդունելու ընթացակարգին, այլ ոչ աշխատանքից ազատման հիմքերին:

Քվեարկության օր

Քվեարկության օրվա դիտարկումը շրջիկ դիտորդները սկսել են ընտրական տեղամասերի բացման պահից՝ առավոտյան 08:00-ից: Ընդհանուր առմամբ, քվեարկության օրվա ընթացքին հետևել է 53 շրջիկ խմբում ընդգրկված 106 դիտորդ: Ձևավորված 984 տեղամասերից դիտորդներն այցելել են 565 տեղամասեր: Բացի այդ, դիտորդները նաև հետևել են կուսակցությունների և դաշինքների շտաբների ու գրասենյակների, տեղամասերին հարող տարածքների ընդհանուր միջավայրին և իրադարձություններին:

Քվեարկության մասնակցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Թումանյան խոշորացված համայնքում՝ 70%, ամենացածրը՝ Արմավիր խոշորացված համայնքում՝ 21%: Միջինում մասնակցության ցուցանիշը քվեարկության օրվա ավարտին՝ 20:00-ի դրությամբ կազմել է՝ 42%: Երկու բնակավայրերում՝ Ծովագյուղ և Սեմյոնովկա, գրանցվել է ընտրողների զրոյական մասնակցություն: Ոչ մի ընտրող չի մասնակցել քվեարկությանը՝ ի նշան խոշորացման գործընթացի դեմ բողոքի:

---

[6] https://www.facebook.com/martunihamaynq/posts/112687484578860,
[7] https://www.facebook.com/VahagnAshotiArsenyan, http://jermuk.am/Pages/Home/newsdetails.aspx?nID=1462
[8] http://lori.mtad.am/files/legislation/52547.pdf
[9] https://www.azatutyun.am/a/31577296.html

Ընդհանուր առմամբ, քվեարկության օրն անցել է հանդարտ մթնոլորտում: Որոշ բնակավայրերում գրանցվել են խախտումներ և միջադեպեր, որոնք թեև չեն ազդել ընտրությունների արդյունքների վրա, սակայն արժանի են ուշադրության:

Առավել տարածված են եղել մարդկանց և մեքենաների կուտակումները: Դրանք արձանագրվել են համայնքապետարանների տարածքում (3 դեպք), տարածքային ընտրական հանձնաժողովներին (12 դեպք) և տեղամասային կենտրոններին (35 դեպք) հարող տարածքներում: Նշվածներից 4 դեպքում ոստիկանությունը քայլեր չի ձեռնարկել կուտակումները վերացնելու համար: Մարդկանց կուտակումներ են արձանագրվել նաև ընտրական տեղամասերի ներսում (20 դեպք):

Արձանագրվել են նաև քարոզչության կամ հակաքարոզչության իրականացման 7 դեպք, որից 6-ը՝ ընտրատեղամասերին հարող տարածքներում: Տարբեր կուսակցությունների և դաշինքների օգտին քարոզչությունը հիմնականում տեղի է ունեցել տեղամասի մուտքի մոտ կայանված տրանսպորտային միջոցների վրա փակցված քարոզչական պաստառների տեսքով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները հիմնականում լավ են կազմակերպել քվեարկության գործընթացը: Վերջիններիս կողմից սահմանված ընթացակարգերի խախտման միայն 7 դեպք է գրանցվել: Սակայն հարկ է նշել, որ լուրջ թերացում է արձանագրվել հակահամաճարակային կանոնների պահպանման տեսանկյունից, որոնք չենք պահպանվել դիտարկված տեղամասերից 70-ում (մոտ 12 %-ում):

Տեղամասերի կահավորումը հիմնականում կատարվել է պատշաճ կերպով, բացառությամբ 10 տեղամասերի, որտեղ խախտվել են օրենքով սահմանված պահանջները: Դիտորդների զգուշացումից հետո դասավորության հետ կապված թերությունները շտկվել են:

11 տեղամասերում նկատվել է ընտանեկան քվեարկության դեպք (ընտանիքի մեկից ավելի անդամների ներկայություն քվեախցիկում): Այս երևույթը թեև քվեարկության գաղտնիության խախտում է, սակայն միտումնավոր բնույթ չի կրել:

Քվեարկության սենյակում մեկ կուսակցությունից երկու վստահված անձի միաժամանակյա ներկայություն է գրանցվել 5 տեղամասերում:

Կողմնակի, առանց վկայականի անհայտ անձինք են ներկա գտնվել տեղամասերից 5-ում, ովքեր հեռացվել են տեղամասերից դիտորդների զգուշացումից հետո:

Բաց քվեարկության 2 դեպք է արձանագրվել: 2 դեպքում էլ հանձնաժողովների նախագահների պահանջով ընտրողները հանձնել են քվեաթերթիկները և կատարել ևս մեկ՝ գաղտնի քվեարկություն:

Հաշվարկի և ամփոփման փուլում արձանագրվել է 7 դեպք, երբ հանձնաժողովը մերժել է տրամադրել արձանագրության քաղվածքը կամ մասնակցության տեղեկանքը հաշվարկի մասնակիցներին:

Առավել էական խախտումներ գրանցվել են հետևյալ տեղամասերում՝

- 11/13 տեղամասում (գ. Այնթափ, Մասիս) ժամանակավորապես խոչընդոտվել է դիտորդի մուտքը տեղամաս «Դավիթ Համբարձումյան» դաշինքի վստահված անձի կողմից: Հանձնաժողովի նախագահը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն) անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել: Ոստիկանությունը տեղեկացվել է միջադեպի վերաբերյալ:

- 15/29 (գ. Բամբակաշատ գյուղ, Մեծամոր) և 16/21 (գ. Լենուղի, Արմավիր) տեղամասերում միաժամանակ ներկա են գտնվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մեկից ավել վստահված անձիք:
- 17/20 տեղամասում (գ. Բյուրական, Աշտարակ) միաժամանակ ներկա են գտնվել «Հայաստան» դաշինքի անունից գրանցամատյանում գրանցված մեկից ավել վստահված անձիք, մինչդեռ «Հայաստան» դաշինքը 2021 թ. դեկտեմբերի 5-ին անցկացվող ՏԻՄ ընտրություններին որևէ ընտրատարածքում առաջադրված չի եղել:
- 21/57 տեղամասում (ք. Վարդենիս) հանձնաժողովի նախագահը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն) քվեաթերթիկներ և ծրարներ հատկացնող հանձնաժողովի անդամի հետ ընտրողներին հատկացրել է քվեաթերթիկներ և ծրարներ, միևնույն ժամանակ՝ մատնացույց անելով քվեաթերթիկի համապատասխան վանդակը:
- 21/77 տեղամասին (գ. Գեղամասար, Վարդենիս) հարող տարածքում «Միասնական Վարդենիս» դաշինքի վստահված անձ Գևորգ Բաղրամյանը և «Ահարոն Խաչատրյան» դաշինքի վստահված անձ Արայիկ Մաթոյանը ուղղորդել են ընտրողներին:
- 22/12 տեղամասին (գ. Շենավան, Սպիտակ) հատկացվել է ընտրողների թվից մոտ 20-ով պակաս քվեաթերթիկ:
- 26/1 տեղամասում (ք. Ծաղկաձոր) հանձնաժողովի նախագահը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն) խոչընդոտել է դիտորդի ազատ տեղաշարժը և դիտարկումը տեղամասում: Ավելին, վերջինս թույլ չի տվել դիտորդին այս խախտման մասին գրառում կատարել գրանցամատյանում՝ խախտելով Ընտրական օրենսգրքի պահանջները:
- 27/4 տեղամասում (ք. Եղվարդ, Նաիրի) հանձնաժողովի նախագահը («Պատիվ ունեմ» դաշինք) դրսևորել է ակնհայտ անհարգալից վերաբերմունք դիտորդի նկատմամբ և հաշվեհարդարի սպառնալիքներ հնչեցրել նրա հասցեին:
- 29/36 տեղամասում (գ. Գետարգել, Աբովյան) միաժամանակ ներկա են գտնվել «Քաղաքացիական պայմանագիր» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների երկուական վստահված անձիք: Դիտորդների զգուշացումից հետո հանձնաժողովի նախագահը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն) և նշված վստահված անձինք վիճաբանել են դիտորդների հետ, փորձել են արգելել տեսանկարահանումը, ինչի արդյունքում ժամանակավորապես խոչընդոտվել է դիտորդի տեսանկարահանում և դիտարկում իրականացնելու իրավունքը, ինչպես նաև չի թույլատրվել այդ մասին նշում կատարել գրանցամատյանում:
- 30/10 տեղամասում (գ. Աշոցք) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հյուրասիրություն է կազմակերպել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար:
- 33/12 տեղամասում (գ. Ջրառատ, Արթիկ) կասկածելի մեծ թվով ընտրողներ են քվեարկել օգնողի միջամտությամբ (50-ից ավելի օգնության դեպք 2,5 ժամվա ընթացքում): Դեպքի առթիվ «Ականատես» դիտորդական առաքելությունը ահազանգ է ներկայացրել ՀՀ Ոստիկանություն:
- 33/22 տեղամասում (գ. Մեղրաշեն, Արթիկ) հանձնաժողովի քարտուղարը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն) նույն կուսակցության՝ առանց վկայականի վստահված անձին թաքուն կերպով փոխանցել է անհայտ թուղթ:
- 29/5 տեղամասում (ք. Աբովյան) հաշվարկի փուլում նույնանման ծալվածքով քվեաթերթիկներ են հայտնաբերվել, որից 5-ը քվեարկված «Բարգավաճ Հայաստան»

կուսակցության, և 2-ը՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին, ինչը կարող է վկայել վերահսկվող քվեարկության մասին:

- 18/29 տեղամասում (գ. Սուսեր, Թալին) հանձնաժողովի նախագահը («Պատիվ ունեմ») խախտել է դիտորդի իրավունքը՝ հրաժարվելով վերջինիս տրամադրել քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքը: Հանձնաժողովի անդամները անհարգալից վերաբերմունք են դրսևորել դիտորդի հանդեպ:

Արձանագրված խնդիրների հիման վրա ներկայացվել է երկու ահազանգ Ոստիկանություն և մեկ ահազանգ Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Դիտորդների իրավունքների խախտումները բողոքարկվելու են համապատասխան ընտրական հանձնաժողովներ և վարչական դատարան:

Դիտորդական առաքելության մասին

«Ականատեսի» նպատակն է նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորությանը և դրանց նկատմամբ հանրային վերահսկողությանը: Դիտորդական առաքելության անդամներն են Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ) ու «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) հասարակական կազմակերպությունները, «Ռեստարտ» քաղաքացիական նախաձեռնությունը և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը: Առաքելության գործընկերն է «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպությունը:

«Ականատեսը» հիմնադրվել է 2018 թ.-ի օգոստոսին: Այն գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություններից, որոնք կարող են մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի), թեկնածուի օգտին կամ դեմ:

2021 թ. դեկտեմբերի 5-ի ՏԻՄ ընտրությունների դիտարկումն իրականացվել է Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի և Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի աջակցությամբ:

Սույն տեղեկանքի բովանդակության համար պատասխանատու են «Ականատես» դիտորդական առաքելությունն ու դրա անդամ կազմակերպությունները, և այն չի արտացոլում դրամաշնորհատուների տեսակետները: